Պարոն/Տիկին Կ. Սարգսյան, Հ. Բաբայան -ին

Խնդրում եմ տեղեկացնել հանձնաժողովի անդամներին, աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին, ինչպես նաև նախապատրաստել հակիրճ զեկույց՝ գործակարգավար. խորհրդակցությանը ներկայացնելու համար

ՀՀ հանրային ծառայությունները արգավորող հանձնաժողովի նախագահ
պարոն Գ. Բաղրամյանին

Տիկին Ն.Գաբրիելյանին՝ Ի գիտություն

Գ. Բաղրամյան

«15» 07 2024թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **Հանձնաժողովի աշխատակիցների անունները, ազգանունները՝**
   - Կամո Սարգսյան,
   - Սենիկ Բաբայան,
2. **Զբաղեցրած պաշտոնը՝**
   - հանձնաժողովի անդամ,
   - հանձնաժողովի ֆինանսատեխնիկական և դիմում բողոքների վարչության տեխնիկական բաժնի պետ,

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝** Ալբանյա, Տիանա, 2024թ. թվականի հուլիսի 7-10-ը:

4. **Հրավիրող կողմը (առկայության դեպքում)՝** Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալություն (USAID) և Կոմունալ ծառայություններ կարգավորող հանձնակատարների ազգային ասոցիացիան (NARUC):

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝** արտակարգ իրավիճակներում էներգետիկ համակարգի հուսալիության և անվտանգության, ոլորտի ճկունության վերաբերյալ նիստի մասնակցություն:

Մասնավորապես խոսվեց՝

ԱՄՆ ազգային կրիտիկական ենթակառուցվածքի մաս կազմող էլեկտրական կոմունալ ծառայությունները համակարգված տեղական, նահանգային, դաշնային

գործընկերների հետ արձագանքում են աղետներին և ձեռնակում միջոցներ անվտանգ և հուսալի էլեկտրամատակարարում ապահովվելու համար:

Աղետների հետևանքով էներգամատակարարման խափանման դեպքերում սպառողներին էներգիայի մատակարարման վերականգնման աշխատանքների կազմակերպման նպատակով որպես գործիք օգտագործվում է՝

.միջադեպերի կառավարման ազգային համակարգը (NIMS), որն իրենից ներկայացնում է արձագանքման համակարգ և արդյունավետ է բոլորի համար,

.միջադեպերի ղեկավարման համակարգը (ICS), որն ապացուցել է իր արդյունավետությունը արտակարգ իրավիճակներում:

ICS-ը մշակվել է 1970-ականներին Հարավային Կալիֆորնիայի միջգերատեսչական խմբի կողմից, պոտենցիալ արտակարգ իրավիճակների համար: ICS-ի համար հետազոտության ու զարգացման հիմք են հանդիսացել տարբեր խանգառումներ և իրավիճակներ:

ICS-ի սկզբունքները, որոնք ուղղակիորեն նպաստում են հաջող արձագանքին, ներառում են.

.անձնակազմի կառավարման անվտանգության և հաշվետվողականության շեշտադրում,

. ղեկավարման ստեղծում և փոխանցում,

. միասնական ղեկավարություն:

Ամբողջական նյութերը տեղակայված են ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի ընդհանուր համակարգչային (աշխատանքային) ցանցում՝ Աշխատակազմ, Ֆինանսատեխնիկական և դիմումների քննարկման վարչություն, Տեխնիկական բաժին, «Incident Command System (ICS)»:

6. Քննարկված թեմաները (հարցերը)՝ Արտակարգ իրավիճակների արձագանքման կանոնակարգեր, որոնք կնպաստեն էներգետիկ ոլորտի շահագրգիռ կողմերի միջև համագործակցության պլանավորմանը և որոշումների կայացմանը՝ բնական և մարդկային պատճառներով մեղմելու, կառավարելու և վերականգնելու նպատակով: «Արտակարգ իրավիճակների պատրաստվածություն և դրանց կանոնակարգի մշակման/ընդունման դասընթացներ:

7.Հանդիպումները, ելույթները՝

Եվրոպական էներգետիկայի կարգավորողների խորհրդի հանդիպմանը բացման խոսքով հանդես եկան ԱՄՆ USAID<Ալբանիա> երկրի տնօրեն տիկին Միշեր Կավասը,

ERE-ի գլխավոր քարտուղար պարոն Էլթոն Բ. Ռադեշին, NARUC-ի տեխնիկական խորհրդական պարոն Էտեմ Էրթենը:

Նիստի մասնակիցների կողմից ներկայացվեցին զեկույցներ մասնավորապես՝

.Վաշինգտոն նահանգից արտակարգ իրավիճակների պատրաստության փորձի վերաբերյալ,

.Վաշինգտոն նահանգի փորձի վրա բոլոր վտանգների արձագանքման, կանխարգելման, մեղմացման, վերականգնման, գործունեության պլանավորման և էներգետիկ կարևոր ենթակառուցվածքների հետ համակարգման վերաբերյալ:

Նիստի ընթացքում մասնակից որոշ երկրների ներկայացուցիչների կողմից ներկայացվեցին իրենց երկրներում վտանգների արձագանքմանն ու կանխարգելմանը միտված ծրագրերը և նախադեպերը, առկա իրավիճակն ու հեռանկարները:

Նիստի ընթացքում տեղի ունեցավ պանելային քննարկում, որին մասնակցեցին զեկույցով հանդես եկած խոսնակները: Նիստի մասնակիցների կողմից հնչեցին հարցեր և տրվեցին դրանց պատասխանները:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Արտակարգ իրավիճակների էներգետիկ համակարգի հուսալիության և անվտանգության արդյունավետությունը զարգացնելու նպատակով նախատեսվում է հետագա համագործակցություն վտանգների արձագանքման, կանխարգելման, մեղմացման, վերականգնման, գործունեության պլանավորման և էներգետիկ կարևոր ենթակառուցվածքների հետ համակարգում: Ինչպես նաև համապատասխան ոլորտում ճկունությունն ապահովելու նպատակով ծանոթանալ միջազգային պրակտիկային, ուսումնասիրել տարբեր երկրներում առկա իրավիճակը, խնդիրները և տեսլականը:

Գործուղվող ---------- 15.07.24թ. ---------- **Կ. Սարգսյան**

(ստորագրությունը, ամսաթիվը)

Գործուղվող ---------- 15.07.2024թ. ---------- **Ս. Բաբայան**

(ստորագրությունը, ամսաթիվը)

Հավելված N 3

ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն
որոշման

Օրինակելի ձև

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը **Հրաման 478-ՀՆ, 03.06.2024թ.,Հրաման 477-ԳՔ, 31.05.2024թ.**

3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)
ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի անդամ **Կամո Սարգսյան**

ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի ֆինանսատեխնիկական և դիմումների քննարկման վարչության տեխնիկական բաժնի պետ՝ **Սենիկ Բաբայան**

(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)

4. Գործուղման վայրը **Տիրան / Ալբանիա /**

5. Գործուղման ժամկետները **07.07.2024-10.07.2024թթ.**

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը՝ **ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ**
(*թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն*)

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը՝

(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

□ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի

Ծախսի տեսակը		*Կամո Սարգսյան*	*Սենիկ Բաբայան*	**Ընդամենը** (հազ. դրամ)
Ճանապար-հածախս	Ավիաճառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)			
	Ավիատոմսի արժեքը (դրամ)			
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)			
	Վճարը 1 օրվա համար (դրամ)			
	Օրերի քանակը			
	Ընդամենը (դրամ)			
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)			
	Վճարը 1 օրվա համար (դրամ)			
	Օրերի քանակը			
	Ընդամենը (դրամ)			
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար			
	Մուտքի արտոնագրի վճար			
	Այլ ծախսեր (*նկարագրել*)			
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)				

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը,

(հավելվածը լրաց. 23.03.23 N 326-Ն)
Ամսաթիվ

11.07.2024թ.